

2015թ. առաջին եռամսյակի խոշոր հարկ վճարողների ՀՏ մոնիտորինգի ամփոփ
ցուցանիշների վերլուծություն

Սույն վերլուծությունը իրականացվում է այն 528 հարկ վճարողների ամփոփ
ցուցանիշների հիման վրա, որոնք ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանով ընդգրկված
են խոշոր հարկ վճարողների հարկային տեսչության կողմից 2015թ.-ի ընթացքում
սպասարկվող հարկ վճարողների ցանկում:

Խոշոր հարկ վճարողների մոնիտորինգի ամփոփ ցուցանիշների
համեմատական վերլուծությունը իրականացվում է նույն 528 հարկ վճարողների 2015
և 2014 թվականների փաստացի տվյալների հիման վրա:

2015թ. առաջին եռամսյակի ամփոփ ցուցանիշների վերլուծության հիման վրա
կարելի է փաստել, որ

1. Իրացումից հասույթը կազմել է 855.3 մլրդ դրամ կամ նախորդ տարվա նույն
եռամսյակի համեմատությամբ աճել է 5.1 %-ով:
2. Ներմուծման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի
համեմատությամբ նվազել են 14,6 %-ով և կազմել 227.0 մլրդ դրամ:
3. Արտահանման ծավալները կազմել են 109.4 մլրդ դրամ՝ նախորդ տարվա
նույն եռամսյակի 113.7 մլրդ դրամի փոխարեն:
4. Վճարված մաքսային վճարների ցուցանիշի առումով 2015թ.-ի առաջին
եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից վճարվել է շուրջ 36.4 մլրդ.
դրամ:
5. Պետական բյուջե վճարված հարկերի և այլ պարտադիր վճարների ցուցանիշի
առումով 2015թ.-ի առաջին եռամսյակում խոշոր հարկ վճարողների կողմից
վճարվել է շուրջ 88.1 մլրդ դրամ: Ընդ որում, նշված կազմակերպությունների
կողմից 2015թ.-ի առաջին եռամսյակում վճարվել է հանրապետությունում
հավաքագրված հարկային եկամուտների 54.7 %-ը:
6. Հարկային մարմնի կողմից կատարվել են թվով 170 հարկային ստուգումներ,
այդ թվում բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի
կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման
ճշտության 20 ստուգումներ, որոնց արդյունքում առաջադրվել է բյուջե
լրացուցիչ վճարման ենթակա գումարներ 3,2 մլրդ դրամի չափով:
7. 01.04.2015թ.-ի դրությամբ խոշոր հարկ վճարողներն ունեցել են 128.1 մլրդ
դրամ գերավճար, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկի գծով՝ 85.8 մլրդ
դրամ, իսկ հարկային պարտավորություն՝ 17.8 մլրդ դրամ: Նշված

Ժամանակահատվածում պետական բյուջեից հարկ վճարողների գերավճարների գումարներից ավելացված արժեքի հարկի վերադարձի ձևակերպում է կատարվել 11.4 մլրդ դրամի չափով, իսկ գերավճարների գումարներից այլ հարկատեսակների գծով հաշվանցվել է 671.6 մլն դրամի չափով կամ 10.3 %-ով ավել նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

8. Աշխատողների միջին ցուցակային թիվը դիտարկվող ժամանակահատվածում կազմել է 153682 մարդ, ինչը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավել է 0,8%-ով, իսկ մեկ աշխատողի միջին ամսական ԱՎՈՒՄ-ը կազմել է 209 հազար դրամ, նախորդ տարվա 193 հազար դրամի փոխարեն: